

# Որսացանցերում մնացած սիզի քանակությունն ուղարկվեց Հայոց քանակի գորամասեր

13.01.2019

Մեւանա լճում ձկնորսությամբ զբաղվող անձինք, արձագանքելով Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի, ՀՀ Ոստիկանության պետի տեղակալներ Ադասի Կիրակոսյանի, Վարդան Մովսիսյանի և բնապահպանության նախարարի տեղակալ Այսեր Ղազարյանի հորդորներին, Մեւանա լճից արդեն հունվարի 12-ի կեսօրվա դրությամբ դուրս են բերել մնացած որսացանցերը, իսկ դրանցում առկա ձկան ողջ քանակությունը հանձնել են «Մեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին: Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի անմիջական նախաձեռնությամբ և բացատրական աշխատանքների շնորհիվ հանձնված ձուկը «Մեւան ազգային պարկ»-ի ներկայացուցիչների կողմից տեղափոխվել է տարբեր գորամասեր: Հունվարի 12-ին մարզպետ Գնել Սանոսյանն անձամբ եղավ նախատեսված վայրում, որտեղ հավաքվում է ձուկը, գրուցեց ձկնորսների հետ եւ հրահանգեց մինչեւ հունվարի 20-ը խստիվ պահպանել արգելանքի ռեժիմը: «Դեկտեմբերի 20-ից մինչեւ հունվարի 20-ը, ինչպես գիտեք, ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ ընդերքի եւ բնապահպանական տեսչության եւ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից ստորագրվել է գործողության մեջ է դրվել Մեւանա լճում ձկնորսության արգելման ռեժիմի խստացման հետ կապված միջոցառումների ծրագիրը: Անցած օրերի ընթացքում ձկնորսների հիմնական մասը, անսալով մեր եւ պատկան մյուս մարմինների հորդորներին, Մեւանա լճից դուրս էին բերել որսագործիքներն ու լողամիջոցները, սակայն մի մասը, լճում էին թողել որսացանցերը: Այլ խոսքով, արդյունքը մեզ չգոհացրեց, ուստի եւ երեկ մենք ՀՀ ոստիկանության, ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ որոշեցինք հանդիպման հրավիրել ձկնորսությամբ զբաղվող անձանց եւ բացատրական աշխատանքի միջոցով կարգավորել իրավիճակը: Ձկնորսները միանգամայն պատրաստակամորեն արձագանքեցին մեր պահանջին ու անմիջապես գործի անցան: Վաղվանից կբացառվի որեւէ մեկի մուտքը լիճ, խստորեն կպահպանվի արգելանքի ռեժիմը, իսկ ցանցերում մնացած ձկան ողջ քանակությունը տրամադրվում է է բանակին», - հավաստեց մարզպետը: Միաժամանակ Գնել Սանոսյանը շեշտեց, որ արտոնագրային ձկնորսության նոր կարգը, որը մշակված է եւ շուտով կդրվի գործողության մեջ, լիովին կկարգավորի ոլորտում առկա բոլոր խնդիրները: «Մեւանա լճում արտոնագրային ձկնորսության նոր կարգը ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակված է եւ մոտ ժամանակներում կդրվի գործողության մեջ: Այստեղ հաշվի է առնված ամեն մի մանրուք, որպեսզի մենք Մեւանա լճում այսուհետ ունենանք միայն կանոնակարգված ձկնորսություն եւ ձկնապաշարի անխափան վերաարտադրություն: Նոր կարգով մենք երկու հիմնական խնդիր ենք լուծում. առաջին, որ բացառվելու է ձկնորսության որեւէ դեպք սիզի ձկադրության շրջանում, եւ երկրորդ, որ ձկնորսների կողմից օգտագործվելու են միայն լայն տրամաչափի որսացանցեր, որպեսզի մանրաձկները չհայտնվեն դրանցում: Անելու ենք հնարավորը, որպեսզի արգելանքի ռեժիմի խստացման հետ կապված հերթական միջոցառումներն անցնեն գոհացուցիչ արդյունքներով, բացառվի որեւէ ձկնորսի մուտքը դեպի Մեւանա լիճ», - հավաստեց մարզպետ Գնել Սանոսյանը: